

Կոտայքի մարզպետն աշխատանքային այցով Ակունքի Նոր Գյուղ բնակավայրում էր

ՀՀ Կառավարություն 2020 թվականի սուբվենցիոն հայտերի ընդունման գործընթացին զուգահեռ շարունակվում են Կոտայքի մարզպետի այցերը մարզի համայնքներ՝ համայնքային խնդիրները խորքային հասկանալու և հայտերն ընդունելիս առաջնահերթություններ ընտրելու նպատակով:

Այսօր հերթական այցով Ակունքի Նոր Գյուղ բնակավայրում էր:

Համայնքի ղեկավարի և Նոր Գյուղի վարչական ղեկավարի հետ քննարկվել են բնակավայրում ժամանակակից լուծումներով գրոյից Նոր մանկապարտեզ կառուցելուն ուղղված քայլերի հաջորդականությունը:

Համայնքի միջոցներով այստեղ նախատեսվում է կառուցել նաև համայնքային փոքրիկ կենտրոն տարեցների և երիտասարդների ժամանցը ավելի քաղաքակիրթ կազմակերպելու համար:

Ռոմանոս Պետրոսյանը անակնկալ այց է կատարել նաև Աբովյանի 5-րդ հիմնական դպրոց:

Դպրոցում ջերմաստիճանը 19-21 աստիճան է: Մարզպետը շրջել է ռուսական թեթումով դասարաններով, ծանոթացել հայրենադարձված ընտանիքների երեխաների ինտեգրման ընթացքին: